



# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000030

Զեռնարկողը՝

«Շինարար Գրուպ» ՍՊԸ

Ք. Երևան, Ա. Բակունց 4/1

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի,  
թ. Նազարբեկյան թաղամաս 41/1 հասցեում նախադաշտությունուն  
բազմաբնակարան բնակելի համալիրի շրջակա միջավայրի  
վրա ազդեցության նախնական գնահարման հայդ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Դոնյան



## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՃՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000030

< 02 > 04 2020р.

**Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի, Ծ. Նազարբեկյան  
թաղամաս 41/1 հասցեում նախադեսվող բազմաբնակարան բնակելի  
համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական  
գնահատման հայտ**

## Ներածական մաս.

## Ձեռնարկող՝

## «Հինարտ Գրույ» ՍՊԸ

## ՆԵՐԿԱՅԱԳՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ  
/Գ կատեգորիա/

## Գտնվելու վայրը՝

թ. Երևան Աջակինյակ վարչական շրջան

Բազմաբնակարան բնակելի համալիրը նախատեսվում է կառուցել ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջանի, թ.Նազարբեկյան թաղամաս 41/1 հասցեում: Նախագծի համար հիմք է հանդիսացել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N21012020-01-0239 վկայականը, Երևանի քաղաքապետարանի կողմից տրված 01/18-07/2-6313-123 նախագծման թույլտվությունը (Ճարտարապետահատակագծային առաջդրանք):

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման: Նախատեսվում է կառուցել մեկ շենք, որը նախագծվել է գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան:

**Նկարագրական մաս.** Նախագծով նախատեսված է ստորգետնյա ավտոկայանատեղի՝ 2 հարկ, մեկ վերգետնյա հասարակական նշանակության հարկ և 20 բնակելի հարկեր: Հասարակական նշանակությամբ հարկը նախատեսվում է բաժանել 5 մասի՝ մեկ առևտրի կենտրոն, 4 գրասենյակային տարածքներ: Շինությունն ունի 2 մուտք դեպի բնակելի հարկեր՝ 2 վերելակով 2 աստիճանավանդակով և մեկ մուտք դեպի ավտոկայանատեղի: Շինության տանիքը տափակ է՝ կազմակերպված ներքին ջրահեռացմամբ: Երեսապատման համար օգտագործվելու է բազալտ՝ մոխրագույն և սպիտակ երեսապատումով:



Ընդհանուր տարածքը կազմում է 2613քմ, որից կառուցապատման մակերեսը՝ 1568քմ, կանաչապատման մակերեսը՝ 1045քմ, նախատեսվող բնակարանների քանակը՝ 160, ստորգետնյա ավտոկայանատեղիներ՝ 78:

Շաղախը և բետոնը կրերվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախին հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Ընդհանուր համալիրի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 27 ամիս՝ շինարարական աշխատանքների կատարման համար թույլտվության տրամադրման օրվանից:

Հողային աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեքենայացված եղանակով՝ Caterpillar 330 CL տիպի էքսկավատորով, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով։ Հանված գործուղարկությունը կատարման համար թույլտվության տրամադրման օրվանից։

Շինարարական տեխնիկայի վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինարարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում։

Բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեռիխա Զուր» ՓԲԸ ցանցին։

Շինարարության փուլում տեխնիկական և խմելու ջուրը կրերվի պայմանագրաին հիմունքներով՝ ավտոցիստեռներով և տարաներով։

Աշխատողների կենցաղային պայմանները ապահովելու համար կտեղադրվեն բիոզուգարաններ։

Շենքի գազաֆիկացումը իրականացվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ընկերության։

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել։ Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի համաձայն։

Կանաչապատումը ներառում է սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ։ Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված։ Ընդհանուր կտնկվի 196 ծառ։ Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից, կամ ավտոցիստեռներով՝ նախապես կնքելով պայմանագիր։

Նախատեսվող բնակելի համալիրի հարևանությամբ գտնվում են բնակելի և հասարակական նշանակության այլ շենք-շինություններ։ Տարածքում բնության, պատմամշակույթային հուշարձաններ չկան։

Նախատեսվող բնակելի համալիրի հողամասի սահմանում, համաձայն ինժեներա-երկրաբանական եզրակացության, առկա է եղել նախկինում իրականացված կառուցապատման բետոնային շերտ, որը ապամոնտաժվել և հեռացվել է հատկացված վայր, ուստի ծառաթփային բուսականությունը բացակայում է։



Ծինարարական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական իրահանգի բոլոր պահանջները:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր.

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով,

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,

- շինարարական աշխատանքերի ժամանակ շենքը ծածկել փոշու տարածումը կանխող համապատասխան ցանցով,

- Զուգանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեղման համար,

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- պարբերաբար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,

- բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացման ուղղած հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ արտանետվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) ռուկական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրագնում տարվա շուրջ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,

- օգտագործված մեթենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- աղմուկի և թղթումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

**Պատճառաբանական մաս.** Երևան քաղաքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել է քաղաքաշինության կոմիտեն:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների



իրականացմամբ, որոնք կը կրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

- Կառուցապատման հետագա գործառույթները իրականացնել «Օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն, մասնավորապես՝ «Քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի 263-Ն հրամանով հաստատված ՀՀՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի համամապատասխան:

### ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Շինարտ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի թ. Նազարեթեկյան թաղամաս 41/1 հասցեում նախատեսվող բազմաթիվ բնակելի համալիրի շինարարության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Հ. Մեսրոպյան